



2015

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ







2015

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սիրելի համաքաղաքացիներ.

2015 թվականը մայրաքաղաք Երևանի կենսագրության մեջ լուսավոր մի ակնթարթ է, որը, սակայն, ամփոփում է հսկայածավալ աշխատանքի մեջ ներդրված ջանքեր, տեսանելի ձեռքբերումներ ու հաջողություններ, նաև՝ բազում ծրագրեր, որ պիտի իրագործվեն գալիք տարիներին:

Երևանցիների համար օրինաչափ ու բնական է, որ մայրաքաղաքը տարեցտարի դառնում է ավելի բարեկարգ և ավելի գրավիչ: Քաղաքային իշխանությունների համակարգված ու հետևողական գործունեությունը միտված է Երևանի բնակիչների և հյուրերի համար քաղաքային հարմարավետ միջավայր ձևավորելուն, մայրաքաղաքի կենսառիթմը ժամանակակից քաղաքացու պահանջմունքներին հարմարեցնելուն: Այս նպատակներին են ծառայել քաղաքային տնտեսության արդյունավետ կառավարումը, մարդկանց կենսագործունեության համար նպաստավոր պայմանների ապահովումը:

Բարեկարգման հետևողական աշխատանքներ են կատարվել փողոցներում, բակերում, այգիներում, պուրակներում, կառուցվել և վերանորոգվել են բնակելի շենքեր, բազմաթիվ ուսումնական, մշակութային, առողջապահական, մարզական, ժամանցի, առևտրի կենտրոններ, այլևայլ հաստատություններ, խաղահրապարակներ:

Իրականացված ծրագրերի շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել քաղաքացիների կենցաղային կարիքների բավարարման, մասնավորապես՝ ջրամատակարարման և աղբահանության կազմակերպման, ճանապարհային նոր հանգույցների կառուցման գործում, ինչպես նաև բնակչության բոլոր խմբերի համար քաղաքային մատչելի միջավայր ստեղծելու աշխատանքներում:

Հպարտությամբ պիտի արձանագրեմ, որ այսօր Երևանը շատ ավելի մաքուր է, լուսավոր ու բարեկարգ, քան երբևէ:

Մենք սիրում ենք մեր քաղաքը: Երևանի հետ են կապված մեր պայծառ հուշերը և մեր երազանքները: Երևանը մեր տունն է և միշտ պետք է լինի խնամված, հյուրընկալ ու գեղեցիկ:

Երևանի քաղաքապետ՝

Տ. Մարգարյան





ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին քաղաքաշինական ծրագրերն ուղղված են եղել Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված կարևորագույն խնդիրների լուծմանը:

Արշակունյաց պողոտա - Արտաշատի խճուղի հատվածի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2016 թվականին

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Կառուցվում է Երևանի շրջանցիկ ճանապարհը

- Իրականացվել են Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհի՝ Արշակունյաց պողոտա - Արտաշատի խճուղի հատվածի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է 2016 թվականին: Կառուցվող շուրջ 5 կմ երկարությամբ ճանապարհը, հագեցած լինելով նոր և ժամանակակից ենթակառուցվածքներով, տարբեր մակարդակներում տրանսպորտային հանգույցների միջոցով կապահովի անընդհատ երթևեկություն և կհանդիսանա մայրաքաղաքի պատշաճ հարավային մուտք:











Արշակունյաց պողոտա - Արտաշատի խճուղի հատված

- Տարվել են նախապատրաստական աշխատանքներ Երևանի շրջանցիկ ճանապարհի մյուս հատվածի՝ Շիրակի փողոցից Բաբաջանյան փողոցով և Աշտարակի խճուղով մինչև Դավթաշենի կամուրջ՝ շուրջ 10 կմ ճանապարհահատվածի կառուցման ուղղությամբ, ինչի արդյունքում աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2017 թվականին: Աշխատանքները կներառեն 5 ճանապարհային հանգույցներում էստակադաների և Հրազդան գետի վրայով կամրջի կառուցում՝ բոլոր ենթակառուցվածքների փոխարինմամբ և արդիականացմամբ:
- Կառուցվող ճանապարհի Կարմիր բլուր հնավայրով անցնող հատվածի շինարարության նախապատրաստման համար 2015 թվականին իրականացվել են լայնածավալ պեղումներ՝ շինարարության ընթացքում գտածոների ոչնչացումը բացառելու նպատակով:
- Շրջանցիկ ճանապարհի կառուցումը զգալիորեն կբեռնաթափի Երևանի կենտրոնի երթևեկությունը:



Վերգետնյա անցումը հարմարեցված կլինի բնակչության սակավաշարժ խմբերի համար

ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

2015 թվականին նոր բնակարան ստանալու հնարավորություն է տրվել շուրջ 450 ընտանիքի

Մայրաքաղաքի զարգացման քառամյա ծրագրով առաջին անգամ ամբողջական անդրադարձ է կատարվել 4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված քաղաքացիներին նոր բնակարաններով ապահովելու երկար սպասված գործընթացին:



Երևան քաղաքում 01.01.2014 թվականի դրությամբ հաշվառվել էին 4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող 9 շենքեր՝ շուրջ 450 ընտանիքներով: Համայնք-պետություն համագործակցության շրջանակներում 2015 թվականին շահագործման են հանձնվել 4 նոր բազմաբնակարան շենքեր, ինչը հնարավորություն է ստեղծել ամբողջությամբ լուծել այդ ընտանիքների վերաբնակեցման և հին շենքերի քանդման խնդիրը:

Չխախտելով քաղաքաշինական միջավայրը՝ բոլոր նոր շենքերը կառուցվել են նախկինների տեղում՝ սեյսմակայունության ժամանակակից չափորոշիչներին համապատասխան: Բնակարաններն ունեն անհատական ջեռուցման համակարգեր և ապահովված են բնակվելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններով:





Բնակարաններն ապահովված են բնակվելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններով

2015 թվականին շահագործման են հանձնվել 4 նոր բազմաբնակարան շենքեր



ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՈՒՄՆԵՐ

Իրագործվում են ստորգետնյա անցումների շահագործման նոր մոտեցումներ



Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում ամբողջությամբ վերակառուցվել է Աբովյան, Իսահակյան և Մոսկովյան փողոցների խաչմերուկներում գտնվող ստորգետնյա անցումը: Պահպանելով հետիոտնի համար նախատեսված անցումների գործառույթը՝ տարածքը միաժամանակ վերածվել է առևտրի և ժամանցի ժամանակակից կենտրոնի: Այն ամբողջությամբ ապահովվել է ջեռուցման, հովացման, օդափոխության և անհրաժեշտ բոլոր այլ համակարգերով: Համալիրում նախատեսված են համապատասխան միջոցներ՝ բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիություն ապահովելու նպատակով. այն կահավորվել է հատուկ վերելակներով և ամբարձիչներով, համապատասխան սանհանգույցներով:





ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանում կառուցվելէ գեղասահքի նոր դպրոց



Երևանում գործում է 36 մարզադպրոց և մարզամշակութային կենտրոն: 2015 թվականի դեկտեմբերին շահագործման հանձնվեց նաև Իրինա Ռոդնինայի գեղասահքի նոր դպրոցը: Մարզահամալիրը կառուցված է միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան, հագեցված է ժամանակակից սարքավորումներով: Այն նախատեսված է 500 հանդիսատեսի համար: Դպրոցը կառուցվել է մոսկվայաբնակ գործարար Սերգեյ Համբարձումյանի անձնական միջոցներով և նվիրաբերվել Երևան քաղաքին: Շինարարական աշխատանքները սկսվել են 2014 թվականի հունիսին:







ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Բարեկարգման ոլորտում բնակչության կենցաղի հարմարավետության ապահովման նպատակով հետևողականորեն լուծվում են տարիներով կուտակված բազմաթիվ խնդիրներ:

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼ Է 400 ԲԱԿ

ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Երևանում ավելացել է բարեկարգված բակերի թիվը

2015 թվականին մայրաքաղաքում կառուցվել, բարեկարգվել և կահավորվել է 385 բակային տարածք: Տարվա ընթացքում բակային շատ տարածքներ ձևավորվել են նախկինում զավթված տարածքների հաշվին՝ դրանք դարձնելով ընդհանուր՝ բոլոր բնակիչների համար:

Կառուցվել է արհեստական խոտածածկով մինի ֆուտբոլի 12 դաշտ, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել նախորդ տարիներին կառուցված մինի ֆուտբոլի դաշտերում:





ԲՆԱԿՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Մայրաքաղաքում հիմնանորոգվել և վերանորոգվել է 130 000 քմ տանիք

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐՈԳՎԵԼ Է

հարթ տանիք՝ **82 000 քմ**

թեք տանիք՝ **48 000 քմ**



2015 թվականին համատիրությունների հետ համագործակցության շրջանակներում շարունակվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Վերանորոգվել է 727 շենքերի շուրջ 82 000 քմ մակերեսով հարթ տանիք, մասնակի նորոգվել է 900 շենքերի շուրջ 37 000 քմ մակերեսով թեք տանիք: Բացի այդ՝ 13 շենքերի 11 000 քմ մակերեսով թեք տանիքներ հիմնանորոգվել են ամբողջությամբ: Նույն համագործակցության շրջանակներում վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի շուրջ 800 շքամուտքեր:

Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների փլուզումները կանխելու նպատակով 2015 թվականին նորոգվել և ամրացվել է 314 վթարային պատշգամբ, ինչպես նաև նորոգվել և մաքրվել են 10 շենքերի ճակատային մասեր: Բազմաբնակարան շենքերում իրականացվել են նաև շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի՝ 23 282 գծամետր վերանորոգման աշխատանքներ:

ՓՈՂՈՑ-ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Երևան քաղաքի փողոցների և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի պահպանման և բարեկարգման նպատակով 2015 թվականին իրականացվել են շուրջ 1 000 000 քմ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, գերակշիռ մասը՝ բակային տարածքներում: Միաժամանակ իրականացվել են շուրջ 15 000 քմ հողային պաստառով ճանապարհների հիմնանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ:






ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

Մայրաքաղաքում շարունակվել են վթարային հենապատերի նորոգման աշխատանքները: 2015 թ. հիմնանորոգվել է 4 և վերանորոգվել 11 վթարային հենապատ:





ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի պահպանման և շահագործման աշխատանքներին զուգահեռ՝ 2015 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերություն կազմակերպության հետ կնքվել են վարկային և դրամաշնորհային պայմանագրեր արտաքին լուսավորության ցանցի արդիականացման վերաբերյալ: Պայմանագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի 28 փողոցներում լուսատուները փոխարինել էներգախնայող և ժամանակակից լուսատուներով՝ ապահովելով վերգետնյա բոլոր մալուխների անցկացումը ստորգետնյա եղանակով, ինչպես նաև ներդնել լուսատուների հեռակառավարման նոր համակարգ, ինչը հնարավորություն կտա տարբեր ժամերի կառավարել լուսավորության հզորությունը:

Ծրագրի իրականացման շնորհիվ նշված փողոցների լուսավորության միայն հոսանքի ծախսից ակնկալվում է շուրջ 60 տոկոս խնայողություն:

28 ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԸ ԿՓՈԽԱՐԻՆՎԵՆ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐՈՎ

ԿԱՊԱՀՈՎՎԻ ՇՈՒՐՋ 60 % ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ






3 ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին մայրաքաղաքի կոմունալ տնտեսության ոլորտում գրանցվել են էական ձեռքբերումներ:

ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Նախորդ տարիներին բնակչությանը հուզող ամենակարևոր խնդիրներից մեկը 2015 թվականին, ըստ էության, մնաց անցյալում: Այսօր արդեն մայրաքաղաքում սանմաքրման և աղբահանության աշխատանքներն իրականացվում են նորագույն մեքենասարքավորումներով և ժամանակակից չափորոշիչներով: Ընդ որում՝ միջազգային օպերատորի ծառայությունների մատուցման ձևը և որակը միանգամից նկատելի դարձրին էական փոփոխությունները մինչ այժմ խրոնիկական խնդիրներ ունեցող ոլորտում:



2015 թվականը դարձավ մեկնակետ կոշտ թափոնների կառավարման ծրագրի կարևորագույն բաղադրիչ հանդիսացող նոր աղբավայր ունենալու խնդրի լուծման համար: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ կնքվեց համաձայնագիր, որի համաձայն Երևան քաղաքում՝ Նուբարաշենի հին աղբավայրի հարակից տարածքում, կառուցվելու է նոր՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխան աղբավայր, ինչպես նաև ապահովվելու է հին աղբավայրերի անվտանգ սանիտարական մեկուսացումը:

Ձուգահեռ նախապատրաստական աշխատանքներ են տարվել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում կոշտ թափոնների կառավարման երրորդ բաղադրիչի՝ աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի հիմնման մրցութային փաստաթղթերի պատրաստման ուղղությամբ:


ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ




2015 թվականին ամբողջովին ավարտվել են 23 փողոցների 5 210 գծմ. կոյուղատար ցանցի արդիականացման աշխատանքները

2015 թվականն աննախադեպ էր ջրամատակարարման և ջրահեռացման ուղղությամբ կատարված աշխատանքների ծավալներով: «Երևան ջուր» ընկերության կողմից մայրաքաղաքի ջրամատակարարման ծառայությունների բարելավման նպատակով իրականացվել են 2,4 միլիարդ դրամի կապիտալ ներդրումներ: Ամբողջովին թարմացվել և նորովի կառուցվել են 29 000 գծմ. ջրագիծ, կոյուղագիծ և հեղեղատար 70 կապտաժներ, պոմպակայաններ և դիտահորեր: Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավման նպատակով Ֆրանսիայի կառավարության տրամադրած վարկային ծրագրի շրջանակներում 2015 թվականին ամբողջովին ավարտվել են 23 փողոցների 5 210 գծմ. կոյուղատար ցանցի արդիականացման աշխատանքները: Մայրաքաղաքի բնակելի անհատական տների ջրամատակարարման բարելավման նպատակով իրականացվել են 107 027 գծմ. ջրամատակարարման խողովակատարի նորացման, 6 344 անհատական ջրաչափական հորերի կառուցման և անհատական միացումների աշխատանքներ: «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանում կառուցվել է ընդունող խուցը, ավազորսիչների և ճարպի հեռացման կառուցվածքները, էլեկտրաենթակայանը: Ջրամատակարարման ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով SCADA հեռակառավարման համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում «Երևան ջուր» ընկերության կողմից շահագործվող ցանցի տարբեր ինժեներական ենթակառուցվածքներում 2015 թվականին տեղադրվել են 122 ծախսաչափական և հեռակառավարման սարքավորումներ: Վերոնշյալ ծրագրերն ամբողջովին կավարտվեն 2016 թվականին:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ





4 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին բնապահպանության ոլորտը շարունակվել է դիտվել որպես գերակա, ըստ այդմ իրականացվել են աշխատանքներ մայրաքաղաքի կանաչ տարածքների պահպանման և ընդլայնման ուղղությամբ:

մայթերի և սալահատակների, ջրավազանների և այլ հատվածների բարեկարգումն ու արդիականացումը: Նախատեսվում է արդեն քայքայված և երկար ժամանակ չգործող շատրվանները փոխարինել ժամանակակից ջրային և լանդշաֆտային տարրերով ու շատրվաններով, կազմակերպել հանգստի գոտիներ՝ ճեմուղիներով և նստարաններով: Կթարմացվեն ծառատեսակները և կընդլայնվի կանաչ մակերեսը:

ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Բարեկարգվում է Գլխավոր պողոտայի հատվածի ևս մեկ այգի

Համայնք-մասնավոր համագործակցության ներդրումային ծրագրերի շրջանակներում 2015 թվականին Երևան քաղաքի Գլխավոր հատակագծին համապատասխան մշակվել է Գլխավոր պողոտայի՝ Մաշտոց պողոտա-Սարյան փողոց հատվածի զբոսայգու վերակառուցման ծրագիրը: Աշխատանքների մեկնարկը նույնպես տրվել է 2015 թվականին: Ծրագրի շրջանակներում իրականացվում է գոյություն ունեցող կանաչ զանգվածի և գազոնների,



ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Մայրաքաղաքում շարունակվում են կանաչ տարածքների ընդլայնման և պահպանման աշխատանքները

- Բարելավվել է 12,5 հա սիզամարգ
- Տնկվել է 54 000 ծառ և թուփ
- Երևանում ծաղկային տարածքները կազմում են 7,2 հա, դրանք համալրվել են 2 700 000 ծաղկասածիլներով
- Տեղադրվել է ծաղկային գեղարվեստական 120 կոմպոզիցիա
- Կրապատվել է 65 000 ծառ
- Կատարվել են 37 000 ծառերի բուժման աշխատանքներ
- Ստեղծվել է 12 կմ ոռոգման ցանց և 4 խորքային հոր, խորքային հորերի միջոցով հնարավոր է դարձել ոռոգել 50-55 հա կանաչ տարածք:



ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ 6,2 ՀԵԿՏԱՐՈՎ

-Ստեղծվել է Սիլիկյան թաղամասի կանաչ գոտին
-Վերակառուցվել է Ա. Կարապետյանի անվան զբոսայգին
-Ընդլայնվել է Թ. Կրպեյանի անվան զբոսայգու կանաչ մակերեսը





5 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ


Կրթության ոլորտում Երևանի քաղաքապետարանի 2015 թվականի ծրագրերն ուղղված են եղել Երևանի ենթակայության կրթական կազմակերպություններում կրթական ծրագրերի իրականացմանը նպաստող պայմանների բարելավմանը:

Երևանաբնակ երեխաների համար 160 մանկապարտեզներում ապահովվել է անվճար ուսուցում

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևանի ենթակայության նախադպրոցական կազմակերպություններում քաղաքի համաչափ զարգացման սկզբունքի կիրառմամբ և պայմանների բարելավման նպատակով իրականացվել են 31 մանկապարտեզների շենքերի նորոգման, ինչպես նաև 160 մանկապարտեզներում գույքի թարմացման աշխատանքներ: Միաժամանակ, 2015 թվականին մշակվել է մանկապարտեզների էլեկտրոնային կառավարման համակարգ, որը հնարավորություն կտա կանոնակարգել և վերահսկել մանկապարտեզներում երեխաների հերթագրման գործընթացը:








ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետին պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում Երևանի 159 դպրոցներում կազմակերպվել է 91 889 աշակերտների կրթությունը, այդ թվում՝ 1876 աշակերտների ներառական կրթությունը: Իրականացվել են նաև աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով: Անցկացվել են դպրոցական առարկայական օլիմպիադաներ, հոբելյանական միջոցառումներ, ասմունքի և այլ մրցույթներ:

ԵՐԵՎԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ







6 ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Մայրաքաղաքում մշակութային և մարզական կյանքը ակտիվացնելու և հետաքրքիր դարձնելու նպատակով քաղաքային իշխանությունների 2015 թվականի ծրագրերն ուղղված են եղել մշակութային և մարզական ենթակառուցվածքների արդիականացմանն ու դրանց թվի ավելացմանը, ինչպես նաև մարզամշակութային տարբեր միջոցառումների կազմակերպմանը:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆ



Երևանի կենդանաբանական այգում 2015 թվականին կատարվածի չափ լայնածալ աշխատանքներ չէին իրականացվել հիմնադրումից սկսած: 70 տարիների ընթացքում կենդանաբանական այգուն հատկացված 34 հա տարածքից մինչև վերանորոգումը միայն 7 հեկտարն էր կենդանաբնակ, իսկ վերանորոգումից հետո այն կրկնապատկվել է ավելի քան 2 անգամ՝ հասցվելով 16 հեկտարի: Ազատավանդակների վերակառուցման և կառուցման աշխատանքների շնորհիվ կենդանիների և թռչունների կենսապայմաններն առավելագույնս մոտեցվել են բնականին: Կենդանաբանական այգին վերածվել է հաճելի հանգստավայրի, որտեղ կարելի է այցելել նաև ընտանիքով:





Հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում պահպանելով այգու խորհրդանշական ճարտարապետական կառույցները՝ ժամանակակից լուծումներով վերակառուցվել են մուտքերը, խաղահրապարակները, ջրավազանները, հիմնովին փոխվել է լուսավորության համակարգը, կրկնապատկվել է կանաչապատ տարածքը, կառուցվել է նոր զոոկլինիկա:

Նախատեսված ծրագրերի ամբողջական ավարտից հետո Երևանի կենդանաբանական այգին ոչ միայն կդառնա ժամանակակից չափորոշիչներին համապատասխան տարածաշրջանային նշանակության բնապահպանական, կրթական-մշակութային, ժամանցային և զբոսաշրջային վայրերից մեկը, այլև աշխարհի տարբեր երկրների համապատասխան նշանակության այգիների և կենդանիների պաշտպանության հասարակական կազմակերպությունների ու միությունների հետ փոխշահավետ համագործակցող ժամանակակից մասնագիտական կենտրոն:

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ




2013
286 202

2014
242 748

2015
296 536





ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



- Ապահովվել է ավելի քան 30 000 երեխաների արտադպրոցական ուսուցումը՝ մայրաքաղաքի արվեստի, երաժշտական, շախմատի դպրոցներում և մանկապատանեկան և ստեղծագործական կենտրոններում և սպորտդպրոցներում:
- 2015 թվականին մայրաքաղաքում կառուցվել է գեղասահքի մեկ և հիմնվել շախմատի 2 դպրոց, հիմնանորոգվել և վերանորոգվել է մարզամշակութային շուրջ 15 դպրոց, ինչպես նաև մշակույթի 3 տուն և կենտրոն:
- Հիմնանորոգվել է 16 գրադարան, որով ավարտվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության գրադարանների հիմնանորոգման ծրագիրը: Գրքային ֆոնդը հարստացվել է ավելի քան 170 անուն շուրջ 11 000 գրքերով:
- Երևանի ենթակայության 3 թատրոններ և 5 թանգարաններ շարունակել են իրենց բնականոն աշխատանքը:









Երևան քաղաքի ենթակայության բոլոր գրադարանները հիմնանորոգված են



- Մայրաքաղաքում 2015 թվականին կազմակերպվել են ավելի քան 40 քաղաքային հանդիսություններ, այդ թվում միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: «Երևանյան ամառ» ծրագրի և «Էրեբունի-Երևան» տոնակատարությունների շրջանակներում անցկացվել են մշակութային և մարզական տարաբնույթ միջոցառումներ: Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ կազմակերպվել են Համահայկական 6-րդ ամառային խաղերը:





ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Յուրաքանչյուր քաղաքում հարմարավետությունը, կահավորանքն ու ձևավորումը քաղաքային միջավայրի կարևոր բաղադրիչներից են: 2015 թվականին այս ուղղությամբ իրականացված աշխատանքներն ուղղված են եղել բնակիչների և հյուրերի համար Երևանն ավելի գրավիչ և հարմարավետ դարձնելուն:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Մայրաքաղաքում իրականացվել են կահավորման, գունազարդման, նկարազարդման աշխատանքներ


Երևանում քաղաքային կահավորանքի և ձևավորման ծրագիրը կրում է շարունակական բնույթ՝ ապահովելով մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հարմարավետությունը, պահպանելով երևանյան առանձնահատուկ և ուրույն ոճը: 2015 թվականի ընթացքում վերանորոգվել և թարմացվել են նախկինում տեղադրված նստարանները և աղբամանները, տեղադրվել են նորերը, վերանորոգվել և գունազարդվել են կամարանցումներ: Նաև վերանորոգվել և թարմացվել են մետաղական կոնստրուկցիաներ, վերանորոգվել և հատուկ նյութով երեսպատվել են հենասյուներ, նկարազարդվել են բակային տարածքներ:



ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵԾԱՆՎՈՒՂԻ

Հեծանվուղու ցանցը Երևանում 2015 թվականի դրությամբ կազմում է շուրջ 16,5 կմ

Մինչև վերջերս Երևանում հեծանիվը չի դիտարկվել որպես քաղաքային փոխադրամիջոց: Առաջին փորձնական հեծանվուղին՝ Վարդան Մամիկոնյանի արձանի հարակից տարածքից մինչև Մոսկովյան պուրակ ընկած հատվածում, գծագրվեց 2013 թվականին՝ տարբեր կառույցների հետ համագործակցությամբ: 2014 թվականին արդեն միջազգային փորձի ուսումնասիրության և համապատասխան կառույցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվեց նոր հեծանվուղի, և համապատասխան գծանշումները թարմացվեցին 2015 թվականին: Այսօր հեծանվուղու աշխարհագրությունն ընդգրկում է ոչ միայն մայրաքաղաքի կենտրոնը. այն սկսվում է Մատենադարանի հարակից տարածքից՝ ձգվելով մինչև Էրեբունի արգելոց-թանգարան՝ այսպիսով ձեռք բերելով նաև տուրիստական նշանակություն, ճանապարհում ընդգրկելով մայրաքաղաքի կարևոր պատմամշակութային կոթողներ և այլն: 2015 թվականին կառուցվել է 42 հեծանվականգառ՝ մայրաքաղաքում դրանց թիվը հասցնելով 60-ի:



Հեծանվուղու քարտեզ

ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

2015 թվականին շարունակվել են մայրաքաղաքում մատչելիության և հարմարավետության ապահովմանն ուղղված ծրագրերը

Երևանյան ևս 2 այգի հարմարեցվել է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջներին

Մայրաքաղաքի 2 հանրային այգիներում տեղադրվել է մեկական ճոճանակ՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, և համապատասխան տարածքներն ամբողջությամբ հարմարեցվել են բնակչության սակավաշարժ խմբերի համար: Նմանատիպ այգիների թիվը Երևանում 4-ն է:



Հարմարեցված ստորգետնյա անցում

Երևանում 2015 թվականին շահագործման է հանձնվել առաջին ստորգետնյա անցումը՝ հարմարեցված բնակչության սակավաշարժ խմբերի համար:



Քաղաքային 37 ավտոբուսներում տեղադրվել են կանգառների ազդարարման ավտոմատ համակարգեր


Մայրաքաղաքի բնակիչների և քաղաքի հյուրերի համար հասարակական տրանսպորտն առավել հարմարավետ դարձնելու նպատակով քաղաքային 37 ավտոբուսներում ներդրվել են կանգառների ազդարարման ավտոմատ համակարգեր: Այս կերպ քաղաքային տրանսպորտը մատչելի է դարձել նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների համար:

Լսողական խնդիրներ ունեցող քաղաքացիների աջակցման կենտրոն

Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Հայաստանի խուլերի միավորումում հիմնված Խուլերի առցանց աջակցման կենտրոնը մայրաքաղաքի շուրջ 650 խուլերին հնարավորություն է տալիս տեսահաղորդակցման հնարավորությամբ սարքավորումների միջոցով՝ շուրջօրյա գործող ծառայության շնորհիվ ժեստերի լեզվով հաղորդակցվել և ստանալ անհրաժեշտ օգնություն: Կենտրոնը կահավորվել է համապատասխան տեխնիկական ու կապի միջոցներով, և ծառայությունը հասանելի է նաև համացանցին միացված սմարթֆոններից ու համակարգիչներից:

Բնակչության սակավաշարժ խմբերի համար հարմարեցված ավտոբուսների թիվը մայրաքաղաքում հասցվել է 20-ի

2015 թվականին քաղաքապետարանի ենթակայության 10 ավտոբուս ևս մատչելի է դարձվել առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների համար: Այսպիսով, դրանց թիվը մայրաքաղաքում դարձել է 20:



ԿԱՌՈՒՑՎԵԼ Է 375 ԹԵՔԱՀԱՐԹԱԿ

Երևանի բյուջեի միջոցներով



285

մասնավոր կառույցների համագործակցությամբ



90



8 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի հիմնախնդիրները քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում են:





- Հասարակական տրանսպորտի համակարգային հիմնախնդրի լուծման նպատակով 2015 թվականին Երևանի քաղաքապետարանը Ասիական զարգացման բանկի հետ համատեղ նախապատրաստել է մրցութային փաթեթ նոր երթուղային ցանց պատվիրելու համար, ինչը հնարավորություն կտա երթուղիների արդյունավետությունը բարձրացնելու շնորհիվ իրականացնել բարեփոխումների աստիճանական ծրագիր:

- Վերակառուցման և զարգացման բանկի, Եվրոպական բանկի և Եվրոպական Միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ 2015 թվականին մեկնարկել են Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման 2-րդ փուլի աշխատանքները, որոնց հիմնական բաղադրիչ է հանդիսանում դրենաժային թունելի երկարացումը:

- Միաժամանակ նույն կազմակերպությունների աջակցությամբ պատվիրվել է վերգետնյա էլեկտրատրանսպորտի ամբողջական արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրություն, ինչպես նաև բանակցություններ են վարվել դրա ֆինանսավորման ուղղությամբ, ինչը ենթադրում է տրոլեյբուսային պարկի թարմացում, տրոլեյբուսային երթուղային առկա ցանցի վերազինում և վերակառուցում, ինչպես նաև ընդլայնում:





9 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին հզորացվել է բուժհաստատությունների տեխնիկական հագեցվածությունը և բարելավվել է սպասարկման հարմարավետությունը:



● Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների կողմից բնակչության բուժսպասարկման որակը բարելավելու, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների հագեցվածությունը հզորացնելու նպատակով 2015 թվականին ձեռք է բերվել և կազմակերպություններին տրամադրվել է 30 անհրաժեշտ մասնագիտացված բուժսարքավորում:



● Բնակչության սպասարկման հարմարավետությունը բարձրացնելու նպատակով Երևանի ենթակայության 3 բուժհաստատություններում իրականացվել են անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:

● Արդեն ավանդական դարձած առողջապահական տարբեր ակցիաների շրջանակներում շուրջ 32 000 երևանցիներ ստացել են անվճար բուժհետազոտության, անհրաժեշտության դեպքում՝ նաև համապատասխան բուժման հնարավորություն: 2015 թվականին 192 քաղաքացու տրվել է դժվարամատչելի հետազոտություն անցնելու հնարավորություն:





10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային իշխանությունների մշտական ուշադրության կենտրոնում են նաև մայրաքաղաքի բնակիչների սոցիալական պաշտպանության խնդիրները: 2015 թվականին ևս Երևանի քաղաքապետարանը շարունակել է բնակչության տարբեր խմբերի սոցիալական ապահովության խնդիրների լուծմանն ուղղված սոցիալական ծրագրերը:

- Ուսումնական տարվան ընդառաջ Երևանի ենթակայության մանկապարտեզների ավարտական խմբերի, ինչպես նաև սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքների 1-4-րդ դասարանների 13462 երեխաների տրամադրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ:

- Իրենց ամառային հանգիստը ճամբարներում անցկացնելու հնարավորություն է տրվել սոցիալապես անապահով ընտանիքների 7-13 տարեկան 1170 երեխաների:

- Սիրիահայ ավելի քան 1700 ընտանիք ստացել է աջակցություն՝ տարբեր ծրագրերի շրջանակներում:



● «Էրեբունի-Երևան-2797» տոնակատարությունների շրջանակներում սոցիալապես անապահով 2797 ընտանիքների՝ որպես աջակցություն, տրամադրվել է կենցաղային տեխնիկա: Մայրաքաղաքի օրվան նվիրված տոնակատարությունների շրջանակներում բնակարաններ են նվիրաբերվել Արցախյան պատերազմում զոհված և պատերազմի մասնակից հաշմանդամ ազատամարտիկների 30 ընտանիքների:



● Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ ՀՀ սահմանամերձ և Արցախի զորամասերում ծառայող իրենց զավակներին տեսակցելու հնարավորություն են ստացել երևանաբնակ ժամկետային զինծառայողների շուրջ 2500 ծնողներ:

● Անօթևանների ժամանակավոր կացարաններում տեղավորվել են 151 անօթևաններ:

● Ամանորյա միջոցառումների շրջանակներում 36 915 երեխաների տրամադրվել են քաղցրավենիքի նվեր-փաթեթներ, իսկ սոցիալապես անապահով 22 474 անձանց տրամադրվել են սննդի փաթեթներ:

● Սոցիալապես անապահով ընտանիքների 4000 երեխաների համար կազմակերպվել են ամանորյա տոնական միջոցառումներ:

Բնակարան են ստացել զոհված և հաշմանդամ ազատամարտիկների 30 ընտանիք





11 ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

Երևանի ավագանու գործունեությունը շարունակաբար եղել է ակտիվ՝ ներառելով իր լիազորությունների շրջանակներում բոլոր հիմնախնդիրների համակողմանի քննարկումը և որոշումների ընդունումը:


Ռաիսա Մկրտչյան


Երվանդ Երզնկյան


Արթուր Աբրահամ


Ռուբեն Մաթևոսյան

Հաշվի առնելով Երևանի ավագանու նիստերի նկատմամբ հասարակության աճող հետաքրքրությունը, ինչպես նաև գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով 2015 թվականից Երևանի ավագանու նիստերը ուղիղ հեռարձակվել են առցանց:

- Գումարվել է 9 հերթական և 3 արտահերթ նիստ
- Հրավիրվել է 4 մշտական հանձնաժողովների 42 նիստ
- Ընդունվել է 176 որոշում, որոնցից 3-ը անցել է հանրային քննարկման և հանրային բաց լսումների փուլ
- Երևանի ավագանու որոշմամբ 4 հոգու շնորհվել է Երևանի պատվավոր քաղաքացու կոչում:



17 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Երևան քաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքներում առանցքային տեղ է գրավում այլ քաղաքների և շրջանների, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների հետ համագործակցությունը:



Ցեղասպանության զոհերի հուշաքար Մարսելում

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ



Կոմիտասի հուշարձանը Սանկտ Պետերբուրգում

Հաստատվում և ընդլայնվում են մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունները

- 2015 թվականի դրությամբ Երևանի քաղաքապետարանը համագործակցում է ավելի քան 50 քաղաքների և շրջանների հետ
- Ընդլայնվել են գործընկերային հարաբերությունները եվրոպական, ասիական և ԱՊՀ տասնյակ կազմակերպությունների հետ
- Վոլգոգրադ քաղաքի հետ ստորագրվել է համագործակցության համաձայնագիր, ինչպես նաև միջնաժամկետ համագործակցության ծրագրեր՝ Սանկտ Պետերբուրգ և Դոնի Ռոստով քաղաքների հետ
- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում հյուրընկալվել են գործընկեր քաղաքների պատվիրակություններ, ինչպես նաև որոշ քաղաքներում կազմակերպվել են Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներ
- Ապահովվել է Երևանի վարչական շրջանների ակտիվ համագործակցությունը ՀՀ մարզերի և Լեռնային Ղարաբաղի մի շարք քաղաքների հետ
- Երևանում կազմակերպվել է «Լավ կառավարումը Սևծովյան տարածաշրջանում» տարածաշրջանային միջազգային կոնֆերանսը՝ Վիեննայի քաղաքապետարանի և Go-Governance ինստիտուտի հետ համատեղ
- «Էրեբունի - Երևան» տոնակատարություններին մասնակցել են շուրջ 30 գործընկեր քաղաքների պատվիրակություններ:

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է ավելի քան 50 քաղաքների և շրջանների հետ



Միջազգային կոնֆերանս Երևանում

2015
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

www.yerevan.am

ՀՀ, Երևան, 0015, Արգիշտիի փող. 1
Հեռ.՝ (+ 374 10) 514121
Էլ. փոստ՝ press@yerevan.am